ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

12-ը օգոստոսի 2024թ.

Շնորհավորական ուղերձ
Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ

Յուրաքանչյուր պետության և հասարակության շարժիչ ուժը երիտասարդությունն է. կարևորելով երիտասարդների դերն ու նրանց առնչվող խնդիրները՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշմամբ 2000 թվականից օգոստոսի 12-ը նշվում է որպես Երիտասարդության միջազգային օր:

Օրվա առիթով ջերմորեն շնորհավորում եմ հայ երիտասարդներին, որոնք տարբերվում են աշխատասիրությամբ, ստեղծարար մտքով, անկոտրում ուժով և նպատակասլացությամբ: Բազում դրական հատկանիշների կողքին ուզում եմ ընդգծել մեր երիտասարդների հայրենասիրությունն ու խիզախությունը: Տասնամյակներ շարունակ հայ երիտասարդին վստահվել է ամենից բարդ, պատասխանատու, բայց և պատվաբեր գործը՝ հայրենիքի սահմանների պաշտպանությունը: Խորին հարգանքի են արժանի մեր հայրենիքի համար անձնվիրաբար մարտնչած երիտասարդները:

Առանձնահատուկ շնորհավորում եմ Աբովյան համայնքի երիտասարդությանը: Մեծապես կարևորում եմ համայնքի զարգացման գործում և համայնքային ծառայության մեջ երիտասարդների ներգրավվածությունն ու ակտիվությունը: Երիտասարդության նորարարական մոտեցումներով ու գիտելիքներով են պայմանավորված մեր համայնքների և հայրենիքի՝ ժամանակին համընթաց զարգացումը:

Սիրելի՛ երիտասարդներ.

Մաղթում եմ բոլորիդ քաջառողջություն, անսպառ եռանդ և հաղթանակներ, ձեռքբերումներ բոլոր ոլորտներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԲԱԲԱՅԱՆ